ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

# Ժողովուրդ

22 ապրիլի չորեքշաբթի 2026
տպագրության ԺԵ տարի

50
(3259)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

## ՀՖՖ ՆԱԽԱԳԱՀԻ ԴԵՄ ԲՈՒՆՏ Է ՀԱՄՈՒՆԱՑԵԼ

Armlur.am-ի բացառիկ տեղեկություններ-ի համաձայն՝ ֆուտբոլային մի քանի ակումբի սեփականատերեր եւ ֆան ակումբի ակտիվիստներ օրերս հանդիպել են ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանին ու իրենց դժգոհությունը հայտնել հայկական ֆուտբոլի ներկա խայտառակ վիճակի մասին:

Ըստ մեր տեղեկությունների՝ նրանք նշել են, որ թեեւ քաղաքական իշխանությունը չի խառնվում ֆուտբոլային քաղաքականությանը, եւ քաղաքական թիմը արդեն 4 տարի է՝ ամբողջությամբ դուրս է եկել գործնկոմից, ներկա իրավիճակը լուրջ հարվածում է ֆուտբոլին եւ պատիվ չի բերում Հայաստանին: Նրանք հայտնել են, որ մայիսին պատրաստվում են նախադեպը չունեցող բողոքի ալիք սկսել ֆեդերացիայի դեմ:

Մեր աղբյուրները նշում են, որ Նիկոլ Փաշինյանը եւս ամբողջությամբ կիսել է ակումբների մտահոգությունները. իրավիճակը պատիվ չի բերում երկրին, եւ ֆեդերացիայի ամբողջ ղեկավարությունը արժանի չէ շարունակելու իր աշխատանքը:

*Շարունակությունը՝ ArmLur.am կայքում*

ArmLur.am-ի տեղեկություններով՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր»-ի ժամանակավոր կառավարիչ Ռոմանոս Պետրոսյանը կայցելի ՀԾԿՀ: Բանն այն է, որ Պետրոսյանը պատրաստվում է ՀԾԿՀ-ին ներկայացնել առաջարկ, ըստ որի՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ընկերությունում կմեկնարկի գործընթաց՝ուղղված նոր սպառողների՝բաշխման ցանցին միանալու (նոր բաժանորդ դառնալու) դեպքում վճարների 30-40% նվազեցմանը: Հիշեցնենք, որ դեռ հունվարին գրել էինք, թե ՀԷՑ-ի ժամանակավոր կառավարչի կարգադրությամբ արդեն մեկնարկել է նոր սպառողների միացման վճարների նվազեցման գործընթացը: Ըստ նախնական վերլուծությունների եւ ճշգրտված տվյալների՝ փոփոխությունները կունենան հետեւյալ տեսքը. 0.22 կՎ լարման եւ 10 կՎԱ հզորության համար առանձնատների ստանդարտ միացման վճարները՝ Երեւանում ներկայում կազմում են 277 հազար դրամ, իսկ նախնական հաշվարկով կկազմեն շուրջ 186 հազար դրամ, ՀՀ մարզերում ներկայում կազմում են 229 հազար դրամ, իսկ նախնական հաշվարկով կկազմեն շուրջ 151 հազար դրամ:

«Ժողովուրդ» օրաթերթը ուսումնասիրել է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության նախընտրական ցուցակի 62-րդ համար Լյուդվիգ Գյուլնազարյանի հայտարարագրերը, գույքային վիճակն ու քաղաքական գործունեությունը: Լյուդվիգ Գյուլնազարյանը վերջին տարիներին ակտիվ դերակատարում է ունեցել Փարաքար համայնքի կառավարման համակարգում՝ անցնելով ավագանու անդամից մինչեւ համայնքի ղեկավարի պաշտոն: «Ժողովուրդ» օրաթերթը նաեւ գրել էր, որ նրա քաղաքական ուղին ուղեկցվել է ոչ միայն առաջխաղացմամբ, այլեւ աղմկահարույց միջադեպերով: Մասնավորապես, «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ 2024 թվականին Գյուլնազարյանը հրաժարական է ներկայացրել համայնքի ղեկավարի պաշտոնից՝ քրեական միջադեպից հետո: Ըստ հրապարակումների՝ նա գտնվել է կրակոցների վայրում, ստացել է հրազենային վնասվածք, սակայն պնդել է, որ դեպքին մասնակցություն չի ունեցել եւ հրաժարական է տվել՝ նախաքննությանը չխանգարելու համար:

*Մանրամասները՝ ArmLur.am կայքում*



ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանն ընդունել է ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարի՝ Կովկասում եւ Կենտրոնական Ասիայում հատուկ ներկայացուցիչ Քեւին Հեմիլթոնին: Զրուցակիցները գոհունակությամբ ընդգծել են Հայաստանի եւ ՆԱՏՕ-ի միջեւ քաղաքական երկխոսության ակտիվ դինամիկան: Քննարկվել են փոխգործընկերության ընդլայնմանն ուղղված նախագծերը, որոնց կարեւոր բաղադրիչ է Հայաստանի կողմից իրականացվող բարեփոխումներին եւ ժողովրդավարական զարգացմանն աջակցությունը: Նախարար Միրզոյանը ներկայացրել է տարածաշրջանային վերջին զարգացումները, ինչպես նաեւ հարեւանների հետ հարաբերությունների կարգավորման եւ խաղաղության հետագա ինստիտուցիոնալիզացիայի ուղղությամբ իրականացվող քայլերը: Անդրադառնալով տարածաշրջանային փոխկապակցվածության թեմային՝ զրուցակիցներն ընդգծել են, որ նոր իրողությունների պայմաններում Հարավային Կովկասը կարող է փոխկապակցող կամրջի դեր կատարել: Սա արտահայտված է նաեւ ՀՀ կողմից ներկայացված «Խաղաղության խաչմերուկ» նախագծում: Հանդիպմանը մտքեր են փոխանակվել միջազգային անվտանգությանն առնչվող հարցերի, ինչպես նաեւ բազմակողմ հարթակներում փոխգործակցության շուրջ:

## ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

# «ԻՄ ՊԱՅՔԱՐԸ ԵՂԵԼ Է ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ԴԵՄ»

**ArmLur.am-ը զրուցել է «Հայաստան» խմբակցության պատգամավոր Քրիստինե Վարդանյանի հետ:**

**-Տիկին Վարդանյան, Ձեր կենսագրությունը ուսումնասիրելով՝ նկատելի է, որ Ձեր քաղաքական ակտիվ գործունեությունը սկսվել է հատկապես 2018 թվականից: Դա համընկնո՞ւմ է այդ ժամանակաշրջանի իրադարձությունների հետ, թե՞ նախապես էր որոշված:**

-Իրականում հակառակն է: Մինչեւ 2018 թվականը աշխատում էի մասնավոր հատվածում՝ իմ համար շատ հարազատ ոլորտում: Փորձառություն եմ ունեցել նաեւ Եվրոպական խորհրդարանում եւ Դաշնակցության երիտասարդական կառույցներում, բայց կուսակցական դառնալու որոշում չունեի: 2018-ի իրադարձությունների ժամանակ Հայաստանում չէի, բայց ակտիվորեն հետեւում էի ու քննարկումների մեջ էի: Այդ իրադարձությունները ինձ համար ցույց տվեցին իմ քաղաքական պատկանելությունը՝ հակառակ բեւեռում գտնվելը:

Կուսակցական դառնալու որոշումը հեշտ չէր. մոտ 6 տարի ուսումնասիրել եմ, հարցեր տվել, պատասխաններ ստացել: Ի վերջո համոզվեցի, որ այս կառույցով կարող եմ ծառայել իմ երկրին:

**-Այսինքն՝ քաղաքական ակտիվությունը նպատակայի՞ն չէր:**

-Ոչ: Պարզապես 2018-ից հետո սկսեցին տեղի ունենալ իրադարձություններ, որոնց պետք էր արձագանքել: Սկզբում սպասում էինք, որ ինչ-որ մեկը կխոսի, բայց երբ պարզվեց՝ չկա այդ «ինչ-որ մեկը», ստիպված սկսեցինք ինքներս խոսել:

Ժամանակի ընթացքում միայն արձագանքելը բավարար չէր, պետք էր նաեւ պայքարել: Այդպես էլ ստացվեց, որ ամբողջությամբ ներգրավվեցի այս ոլորտում:

**-Իշխանությունը հաճախ նշում է, որ ընդդիմությունը պայքարում է անձերի դեմ: Ձեզ ինչպե՞ս պետք է հիշի հանրությունը՝ որպես գաղափարի՞, թե՞ անձանց դեմ պայքարող:**

-Ես երբեք անձերի դեմ խնդիր չեմ ունեցել: Իմ պայքարը եղել է երեւույթների դեմ: Օրինակ՝ եկամտահարկի համահարթեցման դեմ պայքարը կապված չէր որեւէ կոնկրետ անձի հետ, այլ սխալ քաղաքականության: Խնդիրը այն գիծն է, որը տարվում է: Կարծում եմ՝ 2018-ից հետո այդ գիծը փոխվել է, եւ այն պետք է փոխվի նորից՝ այլ ուղղությամբ:

**-Հաճախ հիշվում է Սոնա Ղազարյանի հետ կապված միջադեպը: Զղջո՞ւմ եք:**

-Ես չեմ կարծում, որ որեւէ բան եմ արել, որի համար պետք է զղջամ: Դա ցույց էր, որտեղ մենք պահանջում էինք պատասխաններ: Եթե դա ընկալվել է որպես ճնշում կամ հոգեկան անհանգստություն պատճառել, կարող եմ ներողություն խնդրել այդ մասով, բայց հիմնական հարցը մնում է՝ իրենց գործողությունների համար երբ են պատասխան տալու:

**-Ձեր մասնակցած ակցիաները երբեմն սուր են գնահատվում:**

-Ես մասնակցել եմ տարբեր ակցիաների՝ դեռ մինչեւ պատգամավոր դառնալը: Դա եղել է իմ քաղաքացիական դիրքորոշման արտահայտումը: Եթե նույնը անեն իմ նկատմամբ, դա նորմալ եմ համարում:

**-Ինչպե՞ս կգնահատեք ընդդիմության աշխատանքը՝ օրինակ 5 բալանոց համակարգով:**

-Եթե իրավիճակը չի փոխվել, ապա արդյունավետ գնահատել չեմ կարող: Մեզ մոտ կա «բավարար» եւ «անբավարար» գնահատական: Այս պահին՝ անբավարար: Պայքարի նպատակը իշխանություն ստանալն է՝ որպես գործիք իրավիճակ փոխելու համար: Կան մարդիկ, ովքեր պատրաստ են այդ պատասխանատվությանը, բայց նրանք քիչ են:

**-Այս խորհրդարանը հաճախ հիշվում է միջադեպերով, հատկապես կանանց նկատմամբ: Ինչպե՞ս եք գնահատում սա:**

-Հասարակության համար սա շատ տհաճ է: Բայց պետք է հասկանալ պատճառը: Նախկինում էլ եղել են սուր խոսքեր, բայց նման պատկերներ՝ ոչ: Այսօր կա իշխանություն, որը ունի մեծ լծակներ եւ հաճախ չի կարողանում ինքն իրեն զսպել: Եթե ուզում ենք նման միջադեպեր չլինեն, պետք է փոխվի այդ կառավարման մշակույթը:

*Զրուցեց՝ ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ*

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ

## ՔՆՆԱՐԿՈՒՄ ԿԼԻՆԻ

ԱԺ պատգամավոր Թագուհի Թովմասյանը հայտնում է. «44-օրյա պատերազմում զոհված, անհետ կորած, բռնի անհետացած զինծառայողների ծնողները դիմել են ինձ՝ ապահովելու իրենց ճշմարտությունը բարձրաձայնելու, տեղեկացված ու լսված լինելու, ինչպես նաեւ պատերազմին առնչվող հանգամանքների վերաբերյալ բաց քննարկում ունենալու իրավունքների իրացումը:

Խոսքը վերաբերում է ոչ միայն քաղաքական կամ ընթացակարգային հարցի, այլ առաջին հերթին՝ մարդու իրավունքներին: Անհետ կորածների եւ բռնի անհետացածների ընտանիքները տարիներ շարունակ ապրում են անորոշության, տեղեկատվական վակումի եւ պատասխանների բացակայության պայմաններում: Այդ իրավիճակում պետությունը պարտավոր է ապահովել հնարավորինս բաց, թափանցիկ եւ արժանապատիվ հաղորդակցություն ընտանիքների հետ:

Ծնողների դիմումի հիման վրա արդեն պաշտոնապես դիմել եմ ԱԺ աշխատակազմի ղեկավար-գլխավոր քարտուղարին՝ տրամադրելու ԱԺ լիագումար նիստերի մեծ դահլիճը՝ աշխատանքային քննարկում կազմակերպելու, 44-օրյա պատերազմի հանգամանքներն ուսումնասիրող քննիչ հանձնաժողովի գաղտնի գրությամբ արխիվացված զեկույցի եւ պատերազմին առնչվող հանգամանքների շուրջ: Առաջարկում ենք, որ քննարկումը կայանա ապրիլի 23-ին՝ ժամը 12:00, ԱԺ նիստերի մեծ դահլիճում՝ բաց, ուղիղ հեռարձակմամբ, այլ ոչ թե դռնփակ ձեւաչափով: Այս հարցում առանցքային են՝ ընտանիքների ճշմարտությունը բարձրաձայնելու եւ լսելու իրավունքը, պետական մարմինների հաշվետվողականությունը, եւ զոհերի ու անհետ կորածների հարազատների նկատմամբ արժանապատիվ վերաբերմունքը:

Քննարկմամբ հետաքրքրված անձինք կարող են մասնակցության կամ լրացուցիչ հարցերի համար զանգահարել նշված հեռախոսահամարով՝ հեռ. 093 783 077: Հետագա մանրամասների մասին կտեղեկացվի հավելյալ: Դիմումը եւ գրությունը կտեղադրեմ մեկնաբանության բաժնում»:

## ՆԱԽԱԳԻԾ

ArmLur.am-ը պարզեց, որ e-draft հարթակում հանրային քննարկման է ներկայացվել «Որդեգրման եւ որդեգրման վերահսկողության իրականացման կարգերը հաստատելու մասին» կառավարության որոշման նախագիծը, որը նպատակ ունի արմատապես վերանայել ոլորտի գործող կարգավորումները: Նախագիծը մշակվել է Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության կողմից՝ միջազգային գործընկերների աջակցությամբ, եւ քննարկման ժամկետ է սահմանվել ապրիլի 20-ից մինչեւ մայիսի 6-ը:

ArmLur.am-ի ուսումնասիրությամբ պարզվում է, որ ներկայումս որդեգրման գործընթացը կարգավորվում է տարբեր իրավական ակտերով՝ ընտանեկան օրենսգիրք, քաղաքացիական դատավարության օրենսգիրք, մի շարք օրենքներ եւ կառավարության որոշումներ, ինչը հաճախ բարդացնում է գործընթացը թե՛ իրավակիրառողների, թե՛ որդեգրել ցանկացող քաղաքացիների համար:

Նոր նախագծով առաջարկվում է ունենալ մեկ միասնական իրավական ակտ, որը կկարգավորի որդեգրման եւ դրա վերահսկողության գրեթե բոլոր փուլերը: Ըստ հեղինակների՝ սա թույլ կտա համակարգել գործընթացը եւ այն համապատասխանեցնել միջազգային չափորոշիչներին:

Առանձնահատուկ կարեւոր փոփոխություններից մեկը վերաբերում է «համադրման» մեխանիզմին: ArmLur.am-ը պարզեց, որ նախագծով որդեգրումը այլեւս չի հիմնվելու միայն որդեգրել ցանկացող անձի ընտրության վրա: Փոխարենը ներդրվում է երկփուլ համակարգ՝

տեխնիկական փուլ,

մասնագիտական փուլ:

Այս մեխանիզմով երեխայի եւ որդեգրողի համապատասխանությունը գնահատվելու է տարբեր չափանիշներով՝ երեխայի կարիքներ, ընտանիքի պայմաններ, հոգեբանական միջավայր եւ այլ գործոններ: Նպատակն է ապահովել երեխայի լավագույն շահը եւ բացառել «ընտրության» սուբյեկտիվ մոտեցումները: Նախագծով նաեւ առաջարկվում է ստեղծել միասնական շտեմարան որդեգրման ենթակա երեխաների եւ որդեգրել ցանկացող անձանց վերաբերյալ, սահմանել հստակ կանոններ գործընթացի գաղտնիության համար, ինչպես նաեւ հստակեցնել վերահսկողության մեխանիզմները:

ArmLur.am-ը պարզեց, որ գործող 2010 թվականի թիվ 269-Ն որոշումը նախատեսվում է աստիճանաբար ուժը կորցրած ճանաչել՝ 2028 թվականից Արարատի մարզում, իսկ 2029 թվականից՝ ամբողջ հանրապետությունում:

Նախագծի հեղինակների համոզմամբ՝ փոփոխությունների արդյունքում որդեգրումը Հայաստանում կկազմակերպվի երեխայի լավագույն շահերից ելնելով, այլ ոչ թե կլինի միայն որդեգրել ցանկացող անձանց ընտրության վրա հիմնված գործընթաց:

*Ա. Վ.*

## ՔՊ–Ն ԴՐԱՄԱՀԱՎԱՔ Է ՍԿՍԵԼ

ArmLur.am-ի տեղեկությունների համաձայն՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը դրամահավաք է հայտարարել: Մենք տեղեկացանք, որ ՔՊ-ն դրամահավաքն իրականացնում է հունիսի 7-ի ԱԺ ընտրությունների քարոզարշավն իրականացնելու համար: Հիշեցնենք, որ ՔՊ-ն բոլոր ընտրություններից առաջ դրամահավաք է իրականացնում: Ըստ կուսակցության ներկայացրած հայտարարությունների՝ դա իրականացվում է այն բանի համար, որ կուսակցությունը կարողանա հոգալ քարոզչական ծախսերը: Նշենք, որ ArmLur.am-ը գրել էր, որ Երեւանի ավագանու ընտրություններին ընդառաջ, տեղի է ունեցել «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության դրամահավաք-երեկոն: Մեզ հայտնի էր դարձել, որ թվով 987 նվիրատուների հանգանակությունների արդյունքում հավաքվել է 506 532 950 ՀՀ դրամ:

*Ս. Գ.*

## ՆՈՐ ԽՄԲԱՔԱՆԱԿ ԿՈՒՂԱՐԿՎԻ

Ադրբեջանական լրատվամիջոցները հայտնում են, որ առաջիկայում Ադրբեջանից Հայաստան կուղարկվի դիզելային վառելիքի հերթական խմբաքանակը: Ըստ հաղորդումների՝ երկաթուղային ճանապարհով նախատեսվում է ուղարկել 16 վագոն դիզելային վառելիք: Հիշեցվում է, որ դեռեւս 2025 թվականի հոկտեմբերի 21-ին Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը հայտարարել էր, որ Ադրբեջանը վերացրել է Հայաստան բեռնափոխադրումների տարանցման բոլոր սահմանափակումները: Առաջին նման բեռը եղել էր Ղազախստանից Հայաստան ուղարկված հացահատիկը: Ադրբեջանական աղբյուրների փոխանցմամբ՝ վերջին ամիսներին շարունակվել են տարբեր բեռների մատակարարումները դեպի Հայաստան: Մասնավորապես՝

2025 թվականի դեկտեմբերի 18-ին SOCAR-ը Հայաստան էր ուղարկել 1220 տոննա ԱԻ-95 բենզին,

2026 թվականի հունվարի 9-ին ուղարկվել էր ընդհանուր 2698 տոննա բեռ՝ ներառյալ բենզին եւ դիզելային վառելիք,

հունվարի 11-ին՝ 18 վագոն բենզին,

փետրվարի 25-ին՝ 4500 տոննա դիզելային վառելիք,

մարտի 5-ին՝ 31 վագոն դիզելային վառելիք եւ պարարտանյութ,

մարտի ընթացքում նաեւ մի քանի խմբաքանակով հացահատիկ եւ այլ բեռներ,

ապրիլին՝ նոր խմբաքանակներ դիզելային վառելիքի եւ պարարտանյութերի:

Այսպիսով, ադրբեջանական լրատվամիջոցները նշում են, որ էներգակիրների եւ այլ բեռների մատակարարումները շարունակական բնույթ են կրում, իսկ նոր՝ 16 վագոն դիզելային վառելիքի ուղարկումը հերթական նման քայլն է:

*Ա. Վ.*

## ԻՐԱՎԻՃԱԿ

### ԹԲԻԼԻՍԻՈՒՄ ՔՆՆԱՐԿՎԵԼ Է

Վրաստանում ՀՀ դեսպան Աշոտ Սմբատյանը եւ Վրաստանում Ֆրանսիայի դեսպան Օլիվյե Կուրտոն հանդիպեցին Թբիլիսիի քաղաքային խորհրդի նախագահ Զուրաբ Աբաշիձեի հետ: Հանդիպմանը մասնակցում էին Թբիլիսիի քաղխորհրդի անդամներ՝ Միխեիլ Ռեխվիաշվիլին եւ Մամուկա Բալիաշվիլին: Դեսպաններն ընդգծեցին երկու երկրների սերտ կապերի կարեւորությունը Վրաստանի հետ, ինչն անդրադառնում է նաեւ մայրաքաղաք Թբիլիսիի հետ համագործակցությանն ու երեք ժողովուրդների միջեւ պատմական կապերի ու ավանդական բարեկամության զարգացմանը: Զրուցակիցները հույս հայտնեցին, որ առկա սերտ համագործակցությունը ապագայում էլ ավելի կխորանա: Հանդիպմանը քննարկվեց նաեւ Թբիլիսիի փողոցներից մեկը աշխարհահռչակ շանսոնյե, հայկական ծագումով, Վրաստանի հետ արմատներով կապված, ֆրանսիացի երգիչ Շառլ Ազնավուրի անվամբ Թբիլիսիի փողոցներից մեկն անվանակոչելու հարցը: Զուրաբ Աբաշիձեն հայտնեց, որ Թբիլիսիի քաղաքային խորհրդի համապատասխան հանձնաժողովը պատրաստ է քննարկել բարձրացված հարցը:

### ՄՆՈՒՄ ԵՆ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Հաշվի առնելով բազմաթիվ հարցադրումները 2026 թ. ապրիլի 15-ից բնականոն մաշվածության արդյունքում շրջանառությունից դուրս եկած 2-րդ սերնդի մի շարք թղթադրամների վերաբերյալ՝ ԿԲ-ից հայտնում են, որ այս որոշումը վերաբերում է միայն նշված թղթադրամներին եւ չի տարածվում 500 դրամ անվանական արժեքով մետաղադրամի վրա:

«ՀՀ բոլոր մետաղադրամները, այդ թվում՝ 500 դրամ մետաղադրամը, շարունակում են մնալ շրջանառության մեջ եւ պահպանել իրենց՝ որպես օրինական վճարամիջոցի կարգավիճակը: Քաղաքացիները կարող են ազատորեն օգտագործել դրանք առօրյա վճարումների համար՝ առանց որեւէ սահմանափակման:

### ԱՆՆԱԽԱԴԵՊ ԽՆԴԻՐՆԵՐ

ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը խոստացել է, որ Իրանը կբախվի աննախադեպ խնդիրների, եթե հրաժարվի բանակցել Վաշինգտոնի հետ: «Նրանք կամ բանակցելու են, կամ էլ կբախվեն աննախադեպ խնդիրների», - ասել է Թրամփը ռադիոլրագրող Ջոն Ֆրեդերիկսի հետ հարցազրույցում: Ամերիկացի առաջնորդը հույս է հայտնել, որ Վաշինգտոնը եւ Թեհրանը կհասնեն համաձայնության: Նա նաեւ խոստացել է, որ այդ դեպքում Իրանը այլեւս միջուկային զենք չի ունենա: Իրանի խորհրդարանի խոսնակ Մոհամմադ Բաղեր Ղալիբաֆը նախկինում հայտարարել էր, որ Իրանը չի բանակցի ԱՄՆ-ի հետ սպառնալիքների ներքո:

ԻՆՉ ՈՒՆԻ

## Ո՞Վ Է ՔՊ-ԱԿԱՆ ՔՆԱՐԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ

**ArmLur.am-ը ուսումնասիրել է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության նախընտրական ցուցակի 37-րդ համարում ընդգրկված Քնարիկ Հարությունյանի ունեցվածքը, ով այս քառօրյա ընթացքում աչքի է ընկնում ակտիվ մասնակցությամբ: ArmLur.am-ը ուսումնասիրեց պաշտոնյայի ներկայացրած տվյալները եւ համեմատեց տարբեր տարիների պատկերն ու փոփոխությունները:**

Քնարիկ Հարությունյանը 2022թ. մարտի 15-ից զբաղեցնում է Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու անդամի պաշտոնը: Մինչ այդ՝ 2021թ. օգոստոսի 3-ից աշխատել է ՀՀ Ազգային Ժողովում՝ որպես «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության փորձագետ: ArmLur.am-ը պարզեց, որ 2024թ. հայտարարագրում պաշտոնյան ներկայացրել է 4 միավոր անշարժ գույք: Նա ունի անհատական բնակելի տուն Գյումրիում, որը ձեռք է բերել ժառանգությամբ (նշված է 03/09/0200 թվական, ինչը, ըստ ամենայնի, տեխնիկական վրիպակ է): Բացի այդ, Վայոց ձորի մարզի Արենի համայնքում նա ժառանգությամբ ստացել է երկու հողամաս եւ բնակելի տուն՝ տնտեսական շինություններով (բոլորը՝ 2022թ. հունիսի 30-ին): 2024թ. ընթացքում Հարությունյանը օտարել է Արենիում գտնվող բնակելի տունը՝ այն վաճառելով 2 միլիոն 800 հազար դրամով: Տրանսպորտային միջոց նա չի հայտարարագրել:

Ֆինանսական միջոցների մասով՝ տարվա սկզբին նրա բանկային հաշիվներում առկա է եղել 2 միլիոն 679 հազար 754 դրամ, իսկ տարվա վերջում մնացել է ընդամենը 138 հազար դրամ: Միաժամանակ հայտարարագրել է 1 միլիոն 500 հազար դրամ կանխիկ գումար: Եկամուտների մասով պատկերը բավականին ծավալուն է: ArmLur.am-ը պարզեց, որ 2024 թվականին նրա ընդհանուր եկամուտը կազմել է 14 միլիոն 711 հազար 688 դրամ: Դրանցից՝

5 միլիոն 711 հազար 310 դրամ ստացել է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունից՝ որպես աշխատավարձ,

- 567 հազար 243 դրամ՝ եկամտային հարկի վերադարձ,
- 33 հազար 135 դրամ՝ «Կանանց իրավունքների տուն» կազմակերպությունից քաղաքացիաիրավական պայմանագրով,
- 8 միլիոն 400 հազար դրամ՝ որպես բանկային վարկ («ՀայէկոնոմԲանկ»):

Տարվա վերջի դրությամբ նրա վարկային պարտավորությունը կազմել է 8 միլիոն 125 հազար 914 դրամ, որը նշված է որպես բնակարանի վարկ:

Քաղաքական գործունեության մասով նա «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության անդամ է եւ զբաղեցնում է կուսակցության աշխատակազմի ղեկավարի տեղակալի պաշտոնը:

*2021 թվական*

Համեմատության համար դիտարկելով 2021թ. հայտարարագիրը՝ ArmLur.am-ը պարզեց, որ այն ժամանակ Հարությունյանն ունեցել է միայն մեկ անշարժ գույք՝ բաժնային սեփականությամբ: Նրա ֆինանսական միջոցները զգալիորեն ավելի փոքր են եղել՝ բանկային հաշվում ընդամենը 83 հազար դրամ, կանխիկ՝ 18 հազար դրամ:

2021 թվականին նրա եկամուտը կազմել է 5 միլիոն 96 հազար 770 դրամ, որից՝

- 3 միլիոն 796 հազար 770 դրամ աշխատավարձ՝ Ազգային Ժողովից,
- 1 միլիոն 300 հազար դրամ՝ փոխառություն:

Նույն տարվա վերջում նրա վարկային պարտավորությունը կազմել է 630 հազար դրամ:

Այսպիսով, ArmLur.am-ի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 2021-ից մինչեւ 2024 թվականը Քնարիկ Հարությունյանի ֆինանսական հոսքերը զգալիորեն աճել են՝ ինչպես եկամուտների, այնպես էլ վարկային պարտավորությունների մասով, իսկ գույքային պատկերը համալրվել է ժառանգությամբ ստացված անշարժ գույքերով:

***ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ***

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

## ԿԺԱՄԱՆԻ ՀՀ

Երեկ փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանն ընդունել է ՀՀ-ում Ֆրանսիայի արտակարգ եւ լիազոր դեսպան Օլիվիե Դընկոտինյիին: Այս մասին հայտնում են ՀՀ կառավարությունից: Փոխվարչապետը առանձնահատուկ ընդգծել է մայիսի 4-ին Եվրոպական քաղաքական համայնքի (ԵՔՀ) գագաթնաժողովին, ինչպես նաեւ հաջորդ օրը՝ մայիսի 5-ին, Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնի՝ պետական այցի շրջանակներում Հայաստանում գտնվելու կարեւորությունը: Այցին ընդառաջ՝ մանրամասն անդրադարձ է կատարվել երկկողմ հարաբերությունների օրակարգային մի շարք հարցերի, այդ թվում՝ խմելու ջրամատակարարման եւ ջրահեռացման, Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի Սիսիան-Քաջարան ճանապարհահատվածի կառուցման շրջանակներում ֆրանսիական կողմի ներգրավվածության, կրթական համագործակցության, ինչպես նաեւ ռազմավարական նշանակության այլ ծրագրերի եւ նախաձեռնությունների վերաբերյալ:

### ԴԻՐՔՈՐՈՇՄԱՆ ԿՈՉՏԱՑՈՒՄ

Միացյալ Նահանգները, որպես հակամարտության հրահրող, պետք է պատասխանատվություն կրի դրա ավարտի համար: Վաշինգտոնի փորձերը՝ Թեհրանին զիջումների ստիպելու, կարող են էլ ավելի կոշտացնել Իրանի դիրքորոշումը, ըստ «Չայնա դեյլի» թերթի խմբագրականի: «ԱՄՆ-ի եւ Իրանի միջեւ հակամարտությունը հասել է կրիտիկական կետի, եւ Իսլամաբադում ընթացող բանակցությունները հույսի նշույլ են տալիս կարգավորման համար: Այնուամենայնիվ, խաղաղության հասնելու հավանականությունը փոքր է, քանի որ երկու կողմերն էլ խորը անվստահություն ունեն եւ ունեն մրցակցող շահեր: Սկզբում իրանական կողմը բաց թողեց այն հարցը, թե արդյոք կմասնակցի բանակցություններին, սակայն երկուշաբթի օրը լրատվամիջոցներին հայտնեց, որ կշարունակի բանակցությունները ԱՄՆ-ի հետ», - գրում է թերթը: Ինչպես նշվում է հոդվածում, Իսլամաբադում հնարավոր բանակցությունները հնարավորություն են ստեղծում կառուցողական երկխոսության համար: «Կարեւոր է, որ երկու կողմերն էլ բանակցություններին մոտենան փոխզիջման պատրաստակամությամբ: Սակայն հենց Միացյալ Նահանգներն է, մասնավորապես՝ որպես այս հակամարտության հրահրող, որը պետք է պատասխանատվություն կրի դրա ավարտի համար: Նրանք պետք է ցույց տան, որ պատրաստ են բանակցել բարի կամքով, քանի որ բազմիցս խախտել են իրենց խոստումները՝ նախ դուրս գալով միջուկային համաձայնագրից, ապա առավելագույն ճնշում գործադրելով եւ հարվածելով Իրանին բանակցությունների ընթացքում, իսկ այժմ՝ բանակցելով՝ պահպանելով շրջափակումը», - նշվում է հոդվածում:

### ԵՐԿԱՐԱՏԵՎ ԿԼԻՆԻ

ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը կարծում է, որ 2025 թվականի ամռանը հարձակման ենթարկված իրանական միջուկային օբյեկտներից հարստացված ուրանի արդյունահանումը երկար ժամանակ կպահանջի: Ամերիկացի առաջնորդի խոսքով՝ 2025 թվականի հունիսին ԱՄՆ-ի հարվածները հանգեցրին իրանական միջուկային օբյեկտների «լիակատար ոչնչացմանը»: «Հետեւաբար, հարստացված ուրանի արդյունահանումը երկար եւ բարդ գործընթաց կլինի», - ասվում է Սպիտակ տան Truth Social-ի կողմից հրապարակված հայտարարության մեջ: Ապրիլի 17-ին ամերիկացի առաջնորդը պնդեց, որ ԱՄՆ-ի եւ Իրանի ներկայացուցիչները կաշխատեն միասին հարստացված ուրանը Իսլամական Հանրապետությունից դուրս բերելու ուղղությամբ, եւ որ Թեհրանը, իբր, պատրաստ է անորոշ ժամանակով կասեցնել իր միջուկային ծրագիրը՝ առանց Վաշինգտոնից որեւէ սառեցված ակտիվ ստանալու: Թրամփը նաեւ պնդեց, որ Իրանի հետ հնարավոր գործարքի պայմանների մեծ մասն արդեն համաձայնեցված է:

### ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԸ

Իրանի արտգործնախարար Աբբաս Արաղչին հայտարարել է, որ ԱՄՆ-ի գործողությունները շարունակում են խոչընդոտել Իրանի եւ ԱՄՆ-ի միջեւ բանակցությունների շարունակմանը: Երկուշաբթի տեղի ունեցած հեռախոսազրույցի ընթացքում Արաղչին եւ Պակիստանի արտգործնախարար Մուհամմադ Իսհաք Դարը քննարկել են տարածաշրջանային զարգացումները եւ այն հրադադարի պայմանավորվածությունը, որը դադարեցրել է ԱՄՆ-Իսրայել պատերազմը Իրանի դեմ: Իրանի ԱԳ նախարարը շնորհակալություն է հայտնել Պակիստանին՝ հրադադարի բանակցություններում միջնորդական ջանքերի համար: Միաժամանակ, նա ընդգծել է, որ ԱՄՆ-ի կողմից հրադադարի շարունակական խախտումները, մասնավորապես՝ իրանական առեւտրային նավերի նկատմամբ սպառնալիքներն ու միջամտությունները, ինչպես նաեւ հակասական հայտարարություններն ու սպառնալիքներով հռետորաբանությունը, լուրջ խոչընդոտ են դիվանագիտական գործընթացի առաջխաղացման համար: Արաղչին նշել է, որ Իրանը հետագա քայլերի վերաբերյալ որոշում կընդունի՝ հաշվի առնելով բոլոր հանգամանքները: Զրույցի ընթացքում կողմերը նաեւ կարեւորել են շարունակական խորհրդակցությունները՝ տարածաշրջանում խաղաղությունն ու կայունությունն ամրապնդելու նպատակով:

ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ

# ԱՆՄԵՂՍՈՒՆԱԿ Է ՃԱՆԱՉՎԵԼ

**Չարենցավանի եկեղեցում հոգեհանգստի ժամանակ քաղաքացուն սպանողը անմեղսունակ է ճանաչվել, եւ բրեական վարույթով նախաքննության ավարտ է հայտարարվել, ու գործը ուղարկվել է դատարան:**

Արթուր Շահնազարյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա անմեղսունակության վիճակում կատարել է հետեւյալ՝ քրեական օրենսգրքով չթույլատրված արարքները:

Արթուր Շահնազարյանը 2024 թվականի մայիսի 07-ին՝ ժամը 20:30-ի սահմաններում, իր բնակության վայրում, դանակի գործադրմամբ առողջության թեթեւ վնասի հատկանիշներ պարունակող մարմնական վնասվածք է պատճառել փեսային՝ Արսեն Վանիկի Խաչատրյանին, իսկ 2025 թվականի հոկտեմբերի 11-ին՝ ժամը 13:00-ի սահմաններում, Չարենցավան քաղաքի «Սուրբ Փրկիչ» եկեղեցում, դանակի գործադրմամբ բազմաթիվ հարվածներ հասցնելով, ապօրինաբար կյանքից զրկել՝ սպանել է Անդրանիկ Միրանի Ղազարյանին, որպիսի գործողություններն արտահայտվել են հետեւյալում:

Արթուր Վարդանի Շահնազարյանը 2024 թվականի մայիսի 07-ին՝ ժամը 20:30-ի սահմաններում, իրենց՝Չարենցավան քաղաքի 3-րդ թաղամասի 21-րդ շենքի 7-րդ բնակարանում, կենցաղային հարցերի շուրջ վիճաբանել է քրոջ ամուսնու՝ Արսեն Վանիկի Խաչատրյանի հետ, որը վերածվել է փոխադարձ կռվի, եւ որի ընթացքում փոխադարձաբար ձեռքերով եւ ոտքերով հարվածներ են հասցրել միմյանց: Այդ ընթացքում Արթուր Շահնազարյանը, մարմնական վնասվածք պատճառելու դիտավորությամբ, չպարզված դանակով հարվածներ է հասցրել փեսային՝Արսեն Խաչատրյանին՝ պատճառելով գլխի ձախից ծոծրակային շրջանի, աջ ականջախեցու, ձախ ուսահոդի շրջանի առաջային մակերեսի մեկական ծակած-կտրած վերքեր, աջ ծոծրակային շրջանի, պարանոցի ստորին երրորդականի աջ կեսի առաջակողմնային մակերեսի արյունազեղումներ, ինչպես նաեւ աջ թշային շրջանի ճանկռվածք՝ առողջության թեթեւ վնասի հատկանիշներ պարունակող մարմնական վնասվածքներ:

Բացի այդ, Արթուր Վարդանի Շահնազարյանը 2025 թվականի հոկտեմբերի 11-ին՝ ժամը 13:00-ի սահմաններում, Չարենցավան քաղաքի Տերվիշյան փողոցի հարակից հատվածում գտնվող «Սուրբ Փրկիչ» եկեղեցում, մասնակցելով ազգականի հուղարկավորության արարողությանը, չպարզված դրդապատճառով, հուղարկավորության մասնակից Անդրանիկ Միրանի Ղազարյանին ապօրինաբար կյանքից զրկելու ուղղակի դիտավորությամբ, անտեսելով եկեղեցում գտնվելու եւ բազմության ներկայության հանգամանքը, իր մոտ եղած ծալովի դանակով թիկունքի կողմից մոտեցել է Անդրանիկ Ղազարյանին եւ դանակով բազմաթիվ հարվածներ հասցրել կրծքավանդակի հետին մակերեսին, պարանոցին եւ գլխին, ապա դիմել փախուստի: Իսկ Անդրանիկ Ղազարյանը հիվանդանոց տեղափոխվելու ճանապարհին ստացած մարմնական վնասվածքներից մահացել է:

*ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ*

ԼՈՒՐԵՐ

## ԿԳԱՆ ԽՈՒԶԱՐԿԵԼՈՒ

Հայաստանում վերջին տարիներին նկատվում է բնակարանային խուզարկությունների թվի էական աճ, ինչը հարցեր է առաջացնում ոչ միայն քրեական արդարադատության արդյունավետության, այլեւ մարդու հիմնարար իրավունքների պաշտպանության տեսանկյունից:

ArmLur.am-ը պաշտոնական վիճակագրական աղբյուրներից պարզեց, որ 2025 թվականի ընթացքում նախաքննական մարմինները դատարաններին ներկայացրել են ընդհանուր 28 451 միջնորդություն՝ քննչական գործողություններ իրականացնելու համար: Դատարանները մերժել են դրանցից 3830-ը, մինչդեռ 22 084-ը բավարարվել են:

Առանձնապես ուշադրության է արժանի մարդկանց բնակարանային խուզարկությունների վիճակագրությունը:

Ուշադրություն՝ 2025 թվականին բնակարաններում խուզարկություն եւ առգրավում իրականացնելու նպատակով ներկայացվել է 10 394 միջնորդություն, որոնց մեծ մասը բավարարվել է, շատ փոքր տոկոսը՝ մերժվել: Այսպիսով՝

- 8176 բնակարան խուզարկվել է,
- 1661-ի դեպքում դատարանը մերժել է:

Այս թվերը վկայում են այն մասին, որ դատարանները գերակշռող դեպքերում թույլատրում են բնակարանային խուզարկությունները, ինչը նշանակում է՝ հազարավոր քաղաքացիների անձնական տարածք ներխուժում է իրականացվում իրավական գործընթացների շրջանակում:

Համեմատության համար նշենք, որ՝

- 2024 թվականին ներկայացվել է շուրջ 7800 միջնորդություն, որոնցից 6275-ը բավարարվել են,
- 2023 թվականին՝ 9764 միջնորդություն, որոնցից 8168-ը բավարարվել են:

Այսպիսով, 2025 թվականին արձանագրվել է բնակարանային խուզարկությունների զգալի աճ՝ թե՛ ընդհանուր թվով, թե՛ դատարանների կողմից դրանց բավարարումների բարձր մակարդակով:

Բնակարանային խուզարկությունը հանդիսանում է քրեական դատավարության ամենախիստ միջամտություններից մեկը, քանի որ այն ուղղակիորեն առնչվում է անձի անձնական կյանքի եւ բնակարանի անձեռնմխելիության իրավունքին:

Թեեւ նման միջամտությունները կարող են լինել օրինական եւ անհրաժեշտ՝ հանցագործությունների բացահայտման նպատակով, վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ դրանց կիրառումը դառնում է լայնածավալ եւ համակարգային:

Բնակարանային խուզարկությունների աճը Հայաստանում վկայում է քրեական հետապնդման գործիքների ակտիվ կիրառման մասին, սակայն միաժամանակ առաջացնում է լուրջ հարցեր անձնական կյանքի իրավունքի պաշտպանության տեսանկյունից:

Ասել է թե՝ զգուշացեք՝ քննչականը ձեր տուն կգա՝ խուզարկելու: Միշտ եղեք զգոն, պատրաստ եւ, ամենակարեւորը, հագնված: Քանի որ եղել են նաեւ դեպքեր՝ օրինակ՝ Գյումրիում, երբ գիշերազգեստով տիկնոջը տարել էին քննչական:

*Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ*

## ԲԱՑԱՀԱՅՏԵԼ ԵՆ

Համայնքային ոստիկանության Մաշտոցի բաժնի ծառայողները, իրացնելով օպերատիվ տեղեկությունները, Մարգարյան փողոցի 2-րդ նրբանցքում հայտնաբերել, թմրամիջոց ձեռք բերելու, պահելու եւ օգտագործելու կասկածանքով ձերբակալել եւ բաժին են տեղափոխել 37-ամյա մի տղամարդու: Նրա անձնական խուզարկությամբ հայտնաբերվել են մեթամֆետամին տեսակի թմրամիջոցի նմանվող զանգվածով երկու փաթեթ, մոխրացած հետքերով կաթուցիչներ, ներարկիչներ: Կազմված փաստաթղթերը ներկայացվել են նախաքննական մարմին

Թմրամիջոցի ապօրինի շրջանառության հաջորդ դեպքը բացահայտել են Համայնքային ոստիկանության Հրազդանի բաժնի ծառայողները: Իրացնելով օպերատիվ տեղեկությունները՝ նրանք Հրազդան քաղաքի Անդրանիկ Զորավարի փողոցում հայտնաբերել, թմրամիջոց պահելու կասկածանքով ձերբակալել եւ բաժին են տարել երկու երիտասարդի, որոնցից մեկը ձերբակալման ժամանակ գրպանից փաթեթ է նետել ծառի տակ: Նրանք կազմված փաստաթղթերի հետ ներկայացվել են նախաքննական մարմին:

Նախաձեռնված քրեական վարույթի շրջանակում կատարված զննությամբ դեպքի վայրում հայտնաբերվել է ընդհանուր 7,4 գրամ թմրամիջոցի նմանվող զանգվածով երկու փաթեթ:

Հրազդան քաղաքի բնակիչ երիտասարդները տեղափոխվել են ձերբակալվածների պահման վայր: Կատարվում է նախաքննություն:

ԼՈՒՐԵՐ

## ՀՈՂԱՄԱՍԸ ՎԵՐԱԴԱՐՁՎԵՑ ՀԱՄԱՅՆՔԻՆ

Գլխավոր դատախազությունը 2025 թվականի մարտի 11-ին հայցադիմում էր ներկայացրել Հակակոռուպցիոն դատարան՝ ընդդեմ ֆիզիկական անձի, երրորդ անձ՝ Տավուշի մարզի Իջեւան համայնքի՝ Իջեւանի Թատերական փողոց թիվ 18/2 հասցեում գտնվող՝ 0.0012 հա մակերեսով հողամասի նկատմամբ ֆիզիկական անձի կառուցապատման իրավունքը դադարեցնելու պահանջով:

Հակակոռուպցիոն դատարանի՝2026 թվականի փետրվարի 24-ի վճռով բավարարվել է Գլխավոր դատախազության հայցը: Վճռով դադարեցվել է Իջեւանի Թատերական փողոց 18/2 հասցեում գտնվող հողամասի նկատմամբ ֆիզիկական անձի կառուցապատման իրավունքը:

Հակակոռուպցիոն դատարանի վճիռը ստացել է օրինական ուժ:

Գլխավոր դատախազության դիմումի հիման վրա՝ Կադաստրի կոմիտեն 2026 թվականի ապրիլի 21-ին դադարեցրել է հողամասի նկատմամբ ֆիզիկական անձի կառուցապատման իրավունքը. հողամասը վերադարձվել է Իջեւան համայնքին:

## ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՎԱՐՏՎԵԼ Է

ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչությունում ավարտվել է Մ.Մ.-ի կողմից խուլիգանություն կատարելու դեպքի առթիվ նախաձեռնված քրեական վարույթի նախաքննությունը:

Նախաքննության ընթացքում պարզվել է, որ 2026 թվականի մարտի 27-ին Մ.Մ.-ն Երեւան քաղաքի Դեմիրճյան փողոցի 1/1 հասցեի մոտ իրականացրել է խուլիգանական գործողություններ, մասնավորապես՝ հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից եւ բարոյական նորմերի նկատմամբ բացահայտ արհամարհական վերաբերմունք դրսեւորելով՝ հայհոյանք եւ անպարկեշտ արտահայտություններ է հնչեցրել:

Մ.Մ.-ի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝Քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով (խուլիգանությունը, որը կատարվել է տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաներն օգտագործելով):

Նրա նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է վարչական հսկողությունը եւ բացակայելու արգելքը:

Քրեական վարույթը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է հսկող դատախազին՝ այն հաստատելու եւ քննության առնելու համար դատարան ուղարկելու միջնորդությամբ:

Ծանուցում. հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ Քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

● *Ըստ վիճակագրության՝ապրիլի 13-ից 20-ը մայրաքաղաքում հայտնաբերվել է ոչ սթափ 176 վարորդ:*

# ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

## ԳԱԶԻ ՃՅՈՒՂԱՎՈՐՈՒՄՆԵՐ ԵՆ ԱՆՑԿԱՑՆՈՒՄ

2024թ. նոյեմբերից Կիրանց եւ դրան հարակից Աճարկուտ գյուղերը գազաֆիկացված են, սակայն այդ գյուղերի առանձնատներ գազատարից ճյուղավորումներ չեն արվել: Հիմա՝ ԱԺ ընտրությունների շեմին, սայլը տեղից շարժվել է: Կիրանցի վարչական ղեկավար Կամո Շահինյանն ասաց, որ սկսվել է գյուղում գազատարից ճյուղավորումների անցկացումը դեպի այն առանձնատներ, որոնց համար առկա են գազաֆիկացման նախագծեր: Ներկայումս Կիրանցում ոչ մի բնակիչ չի օգտվում երկնագույն վառելիքից: Կիրանցի հարեւան Աճարկուտ գյուղի վարչական ղեկավար Աշոտ Հարությունյանը հայտնեց, որ գյուղը գազաֆիկացված է, սակայն գյուղի տները գազաֆիկացված չեն, այդ աշխատանքները ներկայումս չեն արվում, թեեւ դրա նախագծային աշխատանքներն արված են: Սահմանամերձ Բերքաբեր գյուղի 150 տներից մոտ 35-ը ներկայումս գազաֆիկացված է: Բերքաբեր բնակավայրի վարչական ղեկավար Տիգրան Հարությունյանը հայտնեց, որ պետբյուջեի ու «Վարդանյան Ընտանիք» բարեգործական հիմնադրամի համաֆինանսավորմամբ է գյուղը գազաֆիկացվել, իսկ առանձնատներ գազի ճյուղավորումներ անցկացվում են Իջեւան համայնքի միջոցներով: Նոյեմբերյան համայնքի սահմանամերձ Բարեկամավան գյուղ տարիներ առաջ է բնական գազ տարվել, սակայն մայր գազատարից ճյուղավորումներ չեն անցկացվել, բնական գազի ոչ մի բաժանորդ չկա: 2025թ. սեպտեմբերի 16-ին Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին հարցում եմ արել, թե Բարեկամավանի տներ երբ է գազի ճյուղավորումներ անցկացվելու, մարզպետի աշխատակազմից պատասխանել են. «Նոյեմբերյան համայնքի Բարեկամավան բնակավայրի՝ դեպի անհատական բնակելի տներ գազիֆիկացումն իրականացված է»: Սակայն իրականությունն այն է, որ Բարեկամավանի առանձնատներ գազաֆիկացում չի արվել, բնական գազի բաժանորդներ չկան: 2026թ. մարտի 17-ին մարզպետ Ղալումյանին նոր հարցում եմ արել, թե ում միջոցներով է արվել Բարեկամավանի տների գազաֆիկացումը: Մարզպետարանից հայտնել են. «Նոյեմբերյան համայնքի Բարեկամավան բնակավայրի՝ դեպի անհատական բնակելի տների գազիֆիկացումն իրականացվել է «Վարդանյան Ընտանիք» բարեգործական հիմնադրամի միջոցներով»: Բարեկամավանի վարչական ղեկավար Գարիկ Աբազյանից տեղեկացա, որ 2025թ.-ին Վարդանյանների բարեգործությամբ Բարեկամավանի առանձնատների (որոնք ներկայումս բնակեցված են) 70 տոկոսը գազի ճյուղավորումներ են անցկացվել, գործարար Միքայել Վարդանյանը 2025թ. աշնանը Տավուշի մարզպետարանում հայտնել է, որ ինքը պատրաստ է Բարեկամավանի մնացած 30 տոկոս տները գազի ճյուղավորումներ անցկացնելու համար պահանջվող գումարը վճարել, սակայն մինչեւ հիմա այդ տների ցանկը մարզպետարանից նրան չի փոխանցվել, որպեսզի ֆինանսավորում իրականացվի եւ գործն արվի:

*ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ*

ԲԱՆՏԻՑ

# ՌՈՒԲԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆԸ ԴԻՄԵԼ Է ՀՀ ՄԻՊ-ԻՆ

**Բաքվում գերության մեջ գտնվող Ռուբեն Վարդանյանը դիմում է ՀՀ ՄԻՊ Անահիտ Մանասյանին.**

«Հարգելի տիկին Մանասյան,

Ձեզ եմ դիմում բանտից՝ հաշվի առնելով մի շարք հանգամանքներ, որոնք կարծում եմ պահանջում են Ձեր ղեկավարած հաստատության ակտիվ եւ հետեւողական ներգրավվածությունը:

Վերջերս հանդիպել եմ Ադրբեջանի օմբուդսմեն Սաբինա Ալիեւայի հետ: Հանդիպման ընթացքում բարձրացրել եմ կենցաղային, բժշկական, իրավական, մարդասիրական եւ դիվանագիտական մի շարք կոնկրետ հարցեր, որոնք վերաբերել են իմ եւ մյուս հայ բանտարկյալների պահման պայմաններին: Այդ հարցերն ուղիղ ազդում են կալանքի տակ գտնվողների անվտանգության, առողջության եւ արժանապատվության վրա: Մեր զրույցի ընթացքում Ադրբեջանի օմբուդսմենը նշել է, որ Ձեզ հետ արդեն քննարկել է Բաքու այցելելու հնարավորությունը, եւ ադրբեջանական կողմը պատրաստակամություն է հայտնել նպաստել դրա կազմակերպմանը: Սակայն այս նախաձեռնությունը դեռեւս չի իրականացվել:

ՀՀ քաղաքացիները երկար ժամանակ պահվում են ադրբեջանական բանտերում՝ առանց ընտանիքի անդամների հետ հանդիպումների եւ անկախ մոնիթորինգի, այդ թվում՝ Կարմիր Խաչի միջազգային կոմիտեի կողմից: Այս պայմաններում, ՀՀ քաղաքացիների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու հաստատությունը որեւէ նախաձեռնողականություն չի ցուցաբերում:

Չնայած երկրների միջեւ դիվանագիտական հարաբերությունների բացակայությանը՝ ընթանում են բանակցություններ տնտեսական հարցերի շուրջ՝ Բաքվում ՀՀ ներկայացուցիչների մասնակցությամբ: Ուստի ինչո՞ւ կալանավորների կյանքի, առողջության եւ իրավունքների հարցերը պաշտոնական Երեւանի օրակարգում չեն, եւ ինչո՞ւ պատվիրակության անդամներից ոչ մեկը չի այցելել գերիներին:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ խնդրում եմ դիտարկել Ձեր, ինչպես նաեւ, համապատասխան պայմանների դեպքում, մյուս հայ բանտարկյալների հարազատների՝ Բաքու այցելելու հնարավորությունը: Իմ կինը՝ Վերոնիկա Զոնաբենդը, պատրաստ է մասնակցել այդպիսի նախաձեռնությանը եւ այցելել Բաքու: Հավանաբար մյուս բանտարկյալների ընտանիքների անդամները եւս պատրաստ կլինեն: Այդպիսի պատվիրակությունը պետք է լինի ինստիտուցիոնալ եւ հետեւողական՝ ունենալով ՀՀ վարչապետի քաղաքական աջակցությունը, որը հաշվետու է քաղաքացիների առջեւ:

Ադրբեջանի օմբուդսմենի առաջ իմ բարձրացրած հարցերը պահանջում են համակարգում երկու երկրների օմբուդսմենների միջեւ: Նման համակարգման բացակայությունը փաստացի փակում է մարդասիրական միակ խողովակը:

Այս առումով խնդրում եմ Ձեզ հրապարակավ պատասխանել հետեւյալ հարցերին.

1. Արդյո՞ք քննարկվում է Բաքու պաշտոնական պատվիրակության այց կազմակերպելու հնարավորությունը հայ գերիների հարազատների մասնակցությամբ:

2. Ինչպե՞ս է ձեր հաստատությունը պլանավորում համակարգել աշխատանքները Ադրբեջանի օմբուդսմենի հետ՝ ՀՀ քաղաքացիներին վերաբերող մարդասիրական հարցերի շուրջ:

3. Ձերբակալության պահից սկսած Ձեր ղեկավարած հաստատությունն ի՞նչ միջոցներ է ձեռնարկել հայ գերիների իրավունքները պաշտպանելու համար:

Կարծում եմ, որ ստեղծված իրավիճակում չափազանց կարեւոր է անհապաղ գործարկել մարդասիրական եւ իրավական բոլոր հնարավոր մեխանիզմները: Ադրբեջանում անօրինական կերպով կալանավորված ՀՀ քաղաքացիների շահերի անտեսումը ՀՀ կառավարության կողմից անհամատեղելի է սեփական քաղաքացիների նկատմամբ պետության պարտավորությունների հետ»:

ԻՆՉՈՒ ԵՔ ԼՌՈՒՄ

«Լուսավոր Հայաստան» կուսակցության նախագահ, ՀՀ հատուկ հանձնարարություններով նախկին դեսպան Էդմոն Մարուքյանի տելեգրամյան գրառումը.

«Ինչպես հայտնում են Արցախի զբոսաշրջության եւ մշակույթի զարգացման գործակալությունից՝ Ստեփանակերտում ոչնչացվել է Սուրբ Աստվածամոր Հովանու եկեղեցին: Մի քանի օր առաջ էլ ադրբեջանցիները քանդել էին նույն Ստեփանակերտ քաղաքի Հեքիմյան փողոցում գտնվող Սուրբ Հակոբ եկեղեցին: Այս գործողություններով Ադրբեջանը ցույց է տալիս, թե ինչպես է վերաբերվում Հայաստանի հետ նախաստորագրված փաստաթղթին, ՀՀ իշխանություններին եւ, ընդհանրապես, հայ ժողովրդին, որը, ըստ իշխանությունների, անհամբեր սպասում է Ադրբեջանի հետ մասշտաբային առեւտրին:

Միեւնույն ժամանակ, երբ իսրայելցի զինվորը Լիբանանի տարածքում կոտրել էր Հիսուս Քրիստոսի արձանը, եւ այդ լուսանկարը տարածվեց, Իսրայելի բոլոր պաշտոնյաները ներողություն խնդրեցին քրիստոնյա աշխարհից, քանի որ հարցի մասին բարձրաձայնվեց ինչպես քրիստոնյա պետությունների, այնպես էլ Լիբանանի կողմից, որի բնակչության մոտ 35-40 տոկոսն է քրիստոնյա:

Իսկ ՀՀ իշխանությունները՝ արտգործնախարարությունը, Անվտանգության խորհրդի քարտուղարը, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները, որոնք բաց բերանով գնում են Բաքու եւ նույն կերպ ժպիտներով վերադառնում, ոչինչ չեն ասում այս ամենի վերաբերյալ: Ամոթ ձեզ: Հայկական քրիստոնեական մշակույթը ոչնչացվում է պետական մակարդակում, ինչո՞ւ եք լռում: Լավ իմացեք՝ եթե մեր երկրում որոշում կայացնողները չփոխվեն, այս ուրացման քաղաքականությունը անպատիժ չի մնալու, եւ ադրբեջանական վանդալիզմը շարունակելու է ծավալվել արդեն այսօրվա Հայաստանի տարածքում: Հունիսի 7-ին այդ արհավիրքը կանգնեցնելու շանս ունենք»:

● *Ապրիլի 13-ից 20-ը մայրաքաղաք Երեւանում հայտնաբերվել է չամրակապված վարելու 673 դեպք:*

ՊԵՏՔ Է ՀԱԿԱԶԴԻ

# ԱՐՄԱՆ ԹԱԹՈՅԱՆԸ ԴԻՄԵԼ Է ԵՄ ԴԵՍՊԱՆԻՆ

«Եվրամիությունը, որը հայտարարել է ՀՀ ընտրություններում ռուսական ազդեցությանը հակազդելու պատրաստակամության մասին, պետք է նույն կերպ արձագանքի նաեւ Ադրբեջանից եկող սպառնալիքներին»:

Այս մասին Հայաստանում Եվրոպական միության պատվիրակության ղեկավար, դեսպան Վասիլիս Մարագոսին ուղղված նամակում գրել է «Միասնության թեւեր» կուսակցության վարչապետի թեկնածու Արման Թաթոյանը:

Վերջինս ներկայացրել է փաստեր, որոնք, ըստ նրա, վկայում են Ադրբեջանից հնչող ուղիղ եւ քողարկված սպառնալիքների մասին՝ կապված Հայաստանում հնարավոր իշխանափոխության հետ:

«Փաստագրված դեպքերի թվում են հետեւյալները. Ադրբեջանի իշխող կուսակցության մի պատգամավոր հանդես է եկել հրապարակային հայտարարությամբ՝ զգուշացնելով, որ Հայաստանում ընդդիմության հաղթանակը կարող է դրդել Ադրբեջանին պաշտոնապես տարածքային պահանջներ ներկայացնել Հայաստանի նկատմամբ: Ադրբեջանի նախագահի վարչակազմի վերահսկողության տակ գտնվող թերթը նշել է, որ Հայաստանում «ռեւանշիստական» կառավարությունը «կառավարելու ոչինչ չի ունենա», իսկ պաշտպանության նախարարության վերահսկողության տակ գտնվող լրատվամիջոցը հայտարարել է, որ «հատկապես կարեւոր է», որպեսզի իշխանությունը Հայաստանում մնա այն ուժերի ձեռքում, որոնք համահունչ են Ադրբեջանի ռազմավարական նպատակներին:

Այս հայտարարությունները, միասին վերցված, ներկայացնում են Բաքվում պետական իշխանություն ներկայացնող դերակատարների համակարգված փորձ՝ ահաբեկելու միջոցով ազդել Հայաստանի ընտրությունների արդյունքների վրա»,- նշված է նամակում:

Արման Թաթոյանը կոչ է արել ԵՄ առաքելությանը Հայաստանում՝

1) հրապարակայնորեն դատապարտել նշված հայտարարությունները եւ արձանագրել այս միջամտության առկայությունը՝ որպես Հայաստանի ընտրական գործընթացի վրա դրսից ազդելու հակաիրավական եւ անընդունելի փորձեր:

2) ընդլայնել այն մեխանիզմները, որոնք նրանք օգտագործում են, ինչպես նշել է ԵՄ-ն, ռուսական ապատեղեկատվությանը հակազդելու համար: Ներառել նաեւ ադրբեջանական միջամտության փորձերի բացահայտումը, հրապարակումը եւ հակազդումը՝ թափանցիկ եւ հետեւողական ձեւով:

Նա նաեւ ընդգծել է, որ արտաքին միջամտության դեմ պայքարը չի կարող լինել ընտրովի եւ պետք է իրականացվի անկախ դրա աղբյուրից: *(Գ)*

ԱԿԲԱ ԲԱՆԿ

# ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՆ ՄԵԿՆԱՐԿԵԼ

**Ակբա բանկն ընդլայնում է միջազգային գործընկերային ցանցը՝ համագործակցություն սկսելով աշխարհի հեղինակավոր ֆինանսական կառույցներից մեկի՝ Նյու Յորքի Մելոն բանկի հետ (The Bank of New York Mellon):**

Ակբա բանկի եւ BNY Mellon-ի համագործակցությունը ծառայությունների մատուցման, ներմուծման կամ արտահանման գործընթացում հավելյալ հնարավորություն է ստեղծում հատկապես իրավաբանական անձ հաճախորդների համար, որի արդյունքում հաճախորդները կարող են ԱՄՆ դոլարով փոխանցումներ կատարել ավելի շատ ապրանքատեսակների եւ/կամ ծառայությունների համար:

Միաժամանակ, ֆիզիկական անձ հաճախորդները նույնպես ստանում են առավել մեծ հնարավորություն՝ ԱՄՆ դոլարով փոխանցումներ իրականացնելու համար:

Համագործակցության շրջանակում հաճախորդներն այսուհետ կարող են Ակբա բանկի միջոցով ԱՄՆ դոլարով միջազգային փոխանցումներ կատարել նաեւ տրանսպորտային միջոցների, էլեկտրատեխնիկայի (համակարգիչներ, պրոցեսորներ, մոնիտորներ, բջջային հեռախոսներ եւ այլն), փայտանյութի, ինչպես նաեւ նավթամթերքի ձեռքբերման համար:

Ակբա բանկը BNY Mellon-ի հետ համագործակցությամբ կնպաստի Հայաստանում հատկապես արտահանմամբ կամ ներմուծմամբ զբաղվող կազմակերպությունների զարգացմանը: Միաժամանակ, այս համագործակցությունը կխթանի նաեւ Հայաստանում գործող բիզնեսների ընդլայնմանն ու միջազգային շուկաներում արդյունավետության բարձրացմանը:

BNY Mellon-ի հետ մեկնարկած համագործակցության շրջանակում հաճախորդները կարող են փոխանցումներ կատարել եւ՛ acba digital-ով, եւ՛ բանկի ցանկացած մասնաճյուղի միջոցով:

*Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից*

ԲԱՆԿԵՐ

# ՎԵՐԱԲԲԵՆԴԱՎՈՐԵԼ Է ՄԱՄՆԱՃՅՈՒՂԸ

Ֆասթ Բանկը վերաբրենդավորել է Տիգրան Մեծ պողոտայում գործող մասնաճյուղը: Այսուհետ Ֆասթ Բանկի հաճախորդները կսպասարկվեն հիմնովին արդիականացված, ընդարձակ, ժամանակակից դիզայներական լուծումներով հագեցած սրահում, որը վերազինվել է նորարարական տեխնիկայով: Վերաբրենդավորումն իրականացվել է միջազգային բոլոր չափանիշներին համապատասխան՝ առաջարկելով բանկային ծառայությունների ամբողջական փաթեթ՝ արագ, պարզ եւ արդյունավետ ձեւաչափով:

Ֆասթ Բանկի Տիգրան Մեծ մասնաճյուղի կառավարիչ Գրիգոր Հակոբյանն ասել է. «Ուրախությամբ տեղեկացնում եմ, որ մենք տեղափոխվել ենք Տիգրան Մեծ պողոտայում ավելի հարմարավետ, ավելի ընդարձակ ու արդի չափանիշներին համապատասխան տեխնիկական միջոցներով զարգացած մասնաճյուղ»:

Ֆասթ Բանկի պրոֆեսիոնալ թիմը պատրաստ է արագ լուծումներ գտնել յուրաքանչյուր հաճախորդի կարիքներին համապատասխան: Մասնաճյուղում կան նաեւ ինքնասպասարկման արդի գործիքներ, որոնք ավելի են պարզեցնում բանկինգի գործընթացը: Մասնաճյուղը գործելու է 24/7 աշխատանքային ռեժիմով:

Ֆասթ Բանկը շարունակում է մասնաճյուղերի արդիականացումը՝ ընթացքում մեծացնելով դրանց քանակը: Նախորդ տարի Բանկը բացել է 4 նոր մասնաճյուղ եւ վերաբրենդավորել 10-ը:

Ֆասթ Բանկը թվային բանկ դառնալուն միտված ընկերություն է, որը ներկայացված է Երեւանում եւ Հայաստանի բոլոր մարզերում:

*Ֆասթ Բանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից (Գ)*

# ՅՈՒՆԻԲԱՆԿԸ ԹՈՂԱՐԿԵԼ Է

Յունիբանկը հայտարարում է 5 մլն ԱՄՆ դոլար ծավալով դոլարային պարտատոմսերի նոր թողարկման մասին: Պարտատոմսերի արժեկտրոնի տոկոսադրույքը կազմում է 5.6% տարեկան, որը կվճարվի եռամսյակային պարբերականությամբ:

Պարտատոմսերի անվանական արժեքը կազմում է 100 ԱՄՆ դոլար, ձեռքբերման նվազագույն քանակը՝ 10 հատ, իսկ ծավալը՝ 1 000 ԱՄՆ դոլար: Շրջանառության ժամկետը սահմանվել է 36 ամիս:

ԱՄՆ դոլարով պարտատոմսերը կարելի է ձեռք բերել Յունիբանկի ցանկացած մասնաճյուղում: Թողարկման տեղաբաշխումը նախատեսվում է ավարտել մինչեւ 29.06.2026թ., որից հետո պարտատոմսերը կցուցակվեն AMX Հայաստանի ֆոնդային բորսայում:

Բանկի կողմից թողարկված անվանական արժեկտրոնային պարտատոմսերով ներգրավված դրամական միջոցները երաշխավորված են Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքով սահմանված չափով, կարգով եւ պայմաններով:

Ծրագրային ազդագիրը (գրանցված 08.04.2026թ. թիվ 1/156 Ա որոշմամբ) եւ թողարկման վերջնական պայմանները հրապարակված են www.unibank.am կայքում: *(Գ)*

*●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:*

ՔՆՆԱԴԱՏԵԼ ԵՆ

# ՀԱԶԱՐԱՎՈՐ ԴՈԼԱՐՆԵՐ ԵՆ ՎՃԱՐԵԼ

**NYP-ն հաղորդում է, որ ինֆլյուենսերները, որոնք երազում էին փայլել Coachella Valley Music and Arts փառատոնում, հայտնվել են սկանդալի կենտրոնում այն բանից հետո, երբ սոցիալական ցանցերի օգտատերերը ծաղրել են նրանց հանդերձանքները եւ «փառատոնի վճարովի ոճաբանների» գաղափարը:**

Որոշ բլոգերներ հարյուրավոր եւ նույնիսկ հազարավոր դոլարներ են վճարել այսպես կոչված ոճաբանների ծառայությունների համար, որոնք պետք է ստեղծեին կատարյալ կերպարներ Կալիֆոռնիայի անապատում երկշաբաթյա փառատոնի համար:

Այնուամենայնիվ, առցանց լսարանի կարծիքով, արդյունքները աղետալի էին: Օգտատերերը ստացված կերպարներն անվանել են «սարսափելի», «քաոսային» եւ «աղբի նման»:

Փորձի մասնակիցներից մեկը՝ Լոս Անջելեսում բնակվող բովանդակության ստեղծող Մոնսե Լեւինը, տեսանյութ է տարածել, որում նա փորձում է իրեն ուղարկված կերպարները եւ դժվարությամբ է կարողանում զսպել իր հույզերը: Նա ասել է, որ ոճաբանը իր հանդերձանքներն ուղարկել է իր հրահանգով, բայց կերպարներից ոչ մեկը չի համապատասխանել իր սպասումներին:

Դրանք ներառում էին էկլեկտիկ համադրություններ, ինչպիսիք են մետաղական վերնաշապիկը, ընձառյուծի նախշերով մանրամասները եւ անհամապատասխան աքսեսուարները: «Ես փորձում եմ խուճապի չմատնվել», - խոստովանել է նա միլիոնավոր դիտումներ հավաքած տեսանյութում: Բլոգերը հետագայում հայտարարել է, որ մտադիր է չեղարկել իր ծառայությունները:

Սոցիալական ցանցերի օգտատերերը անզուսպ են գտնվել: Տեսանյութի տակ մեկնաբանությունները տատանվում են՝ սարկաստիկից մինչեւ խիստ քննադատական.

- «Սա լրիվ սարսափ է»:
- «Ո՞վ է ընդհանրապես վճարում դրա համար»:
- «Սա նման է կատակի»:
- «Վերադարձրեք ինձ փողս»:

Ոմանք նույնիսկ առաջարկել են «դատի տալ բարոյական վնասի համար»:

Նմանատիպ իրավիճակ էր ստեղծվել նաեւ այլ ինֆլուենսերների, այդ թվում՝ բլոգերներ Ադիայի եւ Դարսիի հետ, որոնք նույնպես ցուցադրել են «պրոֆեսիոնալ ոճաբանների» արդյունքները եւ բախվել քննադատության ալիքի: Այս դեպքերում լսարանը կերպարները համեմատել է կառնավալային զգեստների եւ մանկական ոճի հետ, իսկ որոշ օգտատերեր ենթադրել են, որ սա կարող է լինել միտումնավոր «զայրույթի խայծ»՝ բովանդակություն, որը ստեղծվել է սադրանքի եւ կարծիքներ հրահրելու նպատակով:

Coachella-ի ոճաբանների շուրջ պատմությունը արագորեն վերածվել է վիրուսային սկանդալի՝ առաջ քաշելով այն հարցը, թե արդյոք ինֆլուենսերներն, իսկապես, ստանում են մասնագիտական ծառայություններ, թե պարզապես վճարում են տպավորիչ աղմուկ բարձրացնելու համար:

ԱՇԽԱՐՀ

## ՔՐԻՍՏԻՆԱ ԱԳԻԼԵՐԱՆ ՑՆՑԵԼ Է




Քրիստինա Ագիլերան դարձել է Breakthrough Prize մրցանակաբաշխության ամենաշատ քննարկվող հյուրերից մեկը՝ կարմիր գորգին հայտնվելով աչքի ընկնող կերպարով, որը անմիջապես գրավեց տեսախցիկների ուշադրությունը:

45-ամյա երգչուհին Սանտա Մոնիկայում դուրս է եկել սեւ կաշվե զգեստով՝ խորը դեկոլտեով եւ մարմնին հարմար ուրվագիծով, որն ընդգծում էր նրա նկատելիորեն փոխակերպված կազմվածքը: Ըստ լրատվամիջոցների հաղորդագրությունների՝ վերջին տարիներին արտիստուհին կորցրել է մոտ 25 կգ, ինչը դարձել է երեկոյի հիմնական զրույցներից մեկը:

Համացանցում երկրպագուները կրկին հարցեր են բարձրացրել նրա տեսքը փոխակերպելու հնարավոր մեթոդների վերաբերյալ, բայց Ագիլերան երբեք հրապարակայնորեն չի հաստատել քաշի կորստի համար որեւէ դեղամիջոց օգտագործելը:

Համացանցում երկրպագուները կրկին հարցեր են բարձրացրել նրա տեսքը փոխակերպելու հնարավոր մեթոդների վերաբերյալ, բայց Ագիլերան երբեք հրապարակայնորեն չի հաստատել քաշի կորստի համար որեւէ դեղամիջոց օգտագործելը:

Breakthrough Prize մրցանակաբաշխությունը, որը հաճախ անվանում են «Գիտության Օսկար», ամեն տարի միավորում է շոու-բիզնեսի աստղերին եւ աշխարհի առաջատար գիտնականներին: Միջոցառումը մեծարում է այն հետազոտողներին, որոնց հայտնագործությունները ազդեցություն են ունեցել գիտության եւ տեխնոլոգիայի զարգացման վրա:

## ՎԵՐԱԴԱՐՁԵԼ ԵՆ

Նիկոլ Քիդմանի եւ Սանդրա Բուլոքի երկրպագուները ոգեւորված են «Գործնական մոգություն 2»-ի առաջին թիզերի թողարկումից հետո: «Անհավատալի է, խորհրդանշական միստիկ զույգը կրկին միասին է... վերջապես», - գրել է X-ում մի երկրպագու: Մեկ այլ երկրպագու ավելացրել է. «Նրանք հիմա նույնիսկ ավելի լավ տեսք ունեն, քան առաջին ֆիլմում»:

Որոշ հեռուստադիտողներ զարմացած են, թե որքան երիտասարդ տեսք ունեն դերասանուհիները. «Նրանք գրեթե անփոփոխ տեսք ունեն առաջին ֆիլմից գրեթե 30 տարի առաջ: Արդյո՞ք դա արհեստական բանականություն է», - հարցրել է օգտատերերից մեկը: Քիդմանը եւ Բուլոքը կրկին մարմնավորում են իրենց կերպարներին՝ քույրեր Սալիին եւ Ջիլիանին:

Երկրորդ ֆիլմում նկարահանվել են նաեւ Դիան Վիստը, Ստոկարդ Չեհինգը, Ջոի Քինգը, Մեյսի Ուիլյամսը, Շոլո Մարիդունյան եւ Սոլի ՄաքԼեոդը: Պրեմիերան նախատեսված է 2026 թվականի սեպտեմբերին: Շարունակության սյուժեն պատմում է քույրերի մասին, որոնք ծնողների մահից հետո տեղափոխվում են իրենց հարազատների մոտ: Աղջիկները բախվում են մեծանալու դժվարություններին, փոքր քաղաքի նախապաշարմունքներին եւ ընտանեկան անեծքին, որը խանգարում է նրանց գտնել իրական սերը:

1998 թվականի բնօրինակ ֆիլմը ռոմանտիկ միստիկ կատակերգություն էր կախարդական ուժեր ունեցող քույրերի մասին, որոնց դաստիարակել են իրենց էքսցենտրիկ մորաքույրերը:

ՄԱՐԶԱԿԱՆ

## «ԿԱՐՈՂ ԷԻ ՉԵՄՊԻՈՆ ԴԱՌՆԱԼ»




Ալեքսանդրա Գրիգորյանը 2-րդ տարին անընդմեջ ծանրամարտի Եվրոպայի առաջնության արծաթե մեդալակիր է դարձել: Նա մինչեւ 58 կգ քաշային կարգում երկամարտի 210 կգ արդյունքով է կանգնել պատվոհարթակի 2-րդ աստիճանին: Լրագրողների հետ զրույցում ծանրորդն ամփոփել է իր ելույթը. «Այդքան էլ գոհ չեմ իմ արդյունքներից, կարող էի ավելին անել, բայց կարեւորն այն է, որ մեդալ ունեմ եւ ելույթս առանց փորձանքի ավարտեցի: Բավական լուրջ մրցակիցներ ունեի, գիտեի նրանց ունակությունները, բայց կռիվ տվեցի ու մեդալ ապահովեցի: 6 մոտեցումն էլ օգտագործելու դեպքում կարող էի չեմպիոն դառնալ: Ավելիին էի պատրաստ, բայց քանի որ նոր քաշային կարգում եմ հանդես գալիս, քաշս դեռ բավական քիչ է, պետք է ավելացնեմ, որպեսզի արդյունքներս էլ բարելավեմ»:

## ԿՄԵԿՆԱՐԿԻ 34–ՐԴ ՏՈՒՐԸ

Ֆուտբոլի Անգլիայի Պրեմիեր լիգայի առաջնությունում ապրիլի 21-ին «Բրայթոն» - «Չելսի» մրցախաղով մեկնարկելու էր 34-րդ տուրը:

Առաջատարը փոխչեմպիոն «Արսենալն» է, որը վաստակել է 70 միավոր:

Անգլիայի առաջնություն, 34-րդ տուր.

«Բրայթոն» - «Չելսի»՝ 23:00 (Երեւանի ժամանակ)

Ապրիլի 22

«Բորնմուտ»-«Լիդս Յունայթեդ»՝ 23:00

«Բարնլի»-«Մանչեսթեր Սիթի»՝ 23:00

Ապրիլի 24

«Սանդերլենդ»-«Նոթինգեմ Ֆորեսթ»՝ 23:00

Ապրիլի 25

«Ֆուլհեմ»-«Աստոն Վիլա»՝ 15:30

«Լիվերպուլ»-«Քրիսթալ Փելաս»՝ 18:00

«Վեստ Հեմ» - «Էվերտոն»՝ 18:00

«Վուլվերհեմփթոն»-«Տոտենհեմ»՝ 18:00

«Արսենալ»-«Նյուքասլ Յունայթեդ»՝ 20:30

Ապրիլի 27

«Մանչեսթեր Յունայթեդ» - «Բրենթֆորդ»՝ 23:00:

*● Ա. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում ապրիլի 23-ին՝ ժամը 19:00-ին, կկայանա «Դիմակահանդես» բալետը:*

# ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

## ԿԱՐԳ

**ՀԱՐՑ. Արդյո՞ք ՀՀ արդարադատության նախարարությունն իրականացնում է քաղաքացիների ընդունելություն:**

*Նարե Գաբրիելյան, 28 տարեկան*

**ՊԱՏԱՍԽԱՆ.** Յուրաքանչյուր ամիս ՀՀ արդարադատության նախարարի մոտ տեղի է ունենում քաղաքացիների ընդունելություն, որի ընթացքում նախարարը քննարկում է քաղաքացիների դիմումները, բողոքները, առաջարկությունները եւ այլ հարցեր:

Յուրաքանչյուր քաղաքացու հատկացվում է 10 րոպե ժամանակ, որը լրանալուն պես վերջինիս ընդունելությունն ավարտվում է:

Ընդունելությանը հերթագրվելու համար անհրաժեշտ է նախապես խնդրի վերաբերյալ գրավոր դիմում ներկայացնել՝ նշելով խնդիրը եւ ընդունելության խնդրանքը: ՎԵՐՈՆՇՅԱԼ ԳՐԱՎՈՐ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՊԱՐՏԱԴԻՐ Է ԲՈԼՈՐ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ: Դիմում կարող են ներկայացնել էլեկտրոնային եղանակով՝ այն ուղարկել ՀՀ արդարադատության նախարարության էլ. փոստի հասցեին՝ info@moj.am կամ այն թղթային տարբերակով ուղարկել ՀՀ արդարադատության նախարարություն (Վազգեն Սարգսյան 3/8):

Եթե գրավոր դիմումում նշված հանգամանքների ուսումնասիրությամբ պարզվում է, որ քաղաքացին ենթակա է ընդունելության ներկայանալու, նա այդ մասին տեղեկացվում է բանավոր՝ ըստ իր տրամադրած կոնտակտային տվյալների, եթե ենթակա չէ ընդունելության ներկայանալու՝ նա այդ մասին տեղեկացվում է գրավոր:

Անձն ընդունելության օրը պետք է ներկայանա անձը հաստատող փաստաթղթով:

Նախարարի կողմից ընթացք են տրվում միայն Արդարադատության նախարարության իրավասությանը վերաբերող խնդիրներով ընդունելություն կատարելու վերաբերյալ դիմում-բողոքներին՝ հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի կարգավորումը, այն է՝ պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

Նախարարի անունից քաղաքացիների ընդունելությունն իրականացնում են նաեւ նախարարի տեղակալները:

*ՀՀ արդարադատության նախարարություն*

**«ԺՈՂՈՎՈՒՐԴ».** Նախարարի տեղակալների մոտ ընդունելության եկած անձանց համար կրկնակի ընդունելություն կազմակերպել հնարավոր չէ: Փոխնախարարների մոտ ընդունելության համար եւս գործում է նախարարի մոտ ընդունելության համար սահմանված գրավոր դիմումի վերոշարադրյալ ընթացակարգն առանց բացառությունների:

*Էջը՝ ՄԱՐԻԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ*

## ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

**ՀԱՐՑ. Ո՞r իրավիճակը կարող է համարվել շահերի բախում, եւ ի՞նչ կարող է ներառել պատշոն զբաղեցնող անձի մասնավոr շահը:**

*Մարինե Հակոբյան, 35 տարեկան*

**ՊԱՏԱՍԽԱՆ.** Լայն իմաստով՝ շահերի բախումը պաշտոն զբաղեցնող անձի մասնավոր շահերի եւ հանրային շահի միջեւ կոնֆլիկտն է: Ազգային օրենսդրությունն անդրադառնում է շահերի բախմանը հանրային հարաբերությունների ամենատարբեր ոլորտներում եւ նախատեսում կարգավորումներ հանրային ծառայության տեսակները կարգավորող ոլորտային օրենքների, այլ իրավական ակտերի շրջանակներում:

Այդուհանդերձ, հանրային պաշտոն եւ հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց բարեվարքությանն առնչվող հարցերը, նախ եւ առաջ, կարգավորվում են «Հանրային ծառայության մասին» օրենքով, որը շահերի բախումը սահմանում է որպես իրավիճակ, երբ պաշտոն զբաղեցնող անձի մասնավոր շահերն ազդում են կամ կարող են ազդել վերջինիս պաշտոնեական պարտականությունների անաչառ եւ օբյեկտիվ կատարման վրա: Իր հերթին՝ պաշտոն զբաղեցնող անձի մասնավոր շահի ներքո հասկացվում է որեւէ արտոնություն իրեն կամ իր հետ փոխկապակցված անձանց, ինչպես նաեւ այն անձանց կամ կազմակերպություններին, որոնց հետ ինքը կամ իր հետ փոխկապակցված անձն ունի գործարար, քաղաքական կամ այլ գործնական կամ անձնական հարաբերություններ

*Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով*

## ԼՈՒՐ ԿԱԴՐ

*Լուսանկարը՝ shamshyan.com-ի*

Արտակարգ դեպք Նոր Գեղի բնակավայրում. ընթացող Tesla-ում հրդեհ է բռնկվել, կրակը տեսանելի է եղել մի քանի 100 մետրից:

## ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

**«Հայփոստ» ՊՓԲԸ**
հեռ. 51-45-46, 51-45-47

**«Բլից-Մեդիա» ՍՊԸ**
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

## ԱՌԱՋԱՐԿ
## հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

**Բաժանորդագրության բլանկ**

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

## ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

| | | |
|---|---|---|
| | Շիրակ | 0 - 4<br>+ 10 + 15 |
| | Կոտայքի լեռներ | 0 - 3<br>+10 + 14 |
| | Կոտայքի նախալեռներ | + 2 + 5<br>+13 + 16 |
| | Գեղարքունիք | - 3 + 1<br>+ 8 + 13 |
| | Լոռի | - 1 + 3<br>+ 14 + 17 |
| | Տավուշ | - 1 + 2<br>+15 + 18 |
| | Արագածոտնի լեռներ | 0 - 4<br>+ 8 + 12 |
| | Արագածոտնի նախալեռներ | + 1 + 6<br>+13 + 17 |

| | | |
|---|---|---|
| | Արարատ | + 4 + 7<br>+16 + 19 |
| | Արմավիր | + 3 + 7<br>+17 + 20 |
| | Վայոց ձորի լեռներ | 0 - 3<br>+ 7 + 11 |
| | Վայոց ձորի նախալեռներ | + 3 + 7<br>+16 + 20 |
| | Սյունիքի լեռներ | 0 - 3<br>+ 7 + 10 |
| | Սյունիքի նախալեռներ | + 1 + 5<br>+14 + 17 |
| | Սյունիքի հովիտներ | + 6 + 10<br>+19 + 23 |
| | Երեւան | + 5 + 7<br>+16 +18 |

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **21.04.2026**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
**ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*